

ԿՐՕՆԱԿԱՆ

ՊԵՏՐՈՍ Ա ԿԵԹՈՂԻԿՈՍ

ԵՒ

ՊԵՏԱՐՔԵԼ ՍՈՒՐՔԵ ՆՁԱՆՍ

Հայաստանեայց Եկեղեցւոյ պատմութեան մէջ նշանաւոր էջեր եւ զիրք գրաւած է Գեորգեւ կամ Գեորգարձ կոչուած Պետրոս Ա Կաթողիկոս, եւ ինչպէս նորա օրով Հայոց աշխարհում յաճախած գարանադործութիւնք՝ Անւոյ եւ այլ աշխարհակործան դժբաղդութիւնք եւ արկածներ առաւելապէս տիրառիթ վիշտ եւ մեծ կսկիծ կազգեն ճշմարիտ Հայոց զգայուն սրտից, նոյնպէս 1022 (ՆՂԱ.) Փրկչական թուականում Խաղտեաց կողմերում՝ Զրօրհնեաց տօնի օրը՝ ի ներկայութեան Վասիլ կայսեր Յունաց՝ սրբալոյս Միւռսնը ի գեան թափելով եւ ջուրը օրհնելով ընդ իւր ունեցած Կէնաց Ժայռով՝ առ վայր մի գետոյն ընթացքը հանգարտեցնելը արդարեւ մեծ սքանչելիք եւ պարծանք պէտք է համարուի, եւ գէթ սուրաւ հոգեկան ոչ սակաւ մխիթարութիւն կփոխանակուին ճշմարիտ Հայոց ազետակոծ սրբտից:

Մեր նպատակ այժմ՝ յիշեալ Գեորգեւ սուրբ Նշանի կամ Կենաց փայտի վերայ միայն խօսել լինելով, 1058 փրկչական թուականում Գեորգարձ կոչուած Պետրոս Հայրապետի առ Աստուած փոխուելէն եւ Սերասախոյ Ս Նշան վանքում հանգուցելոյն մարմինը

ամփոփուելէն զկնի՝ ոչ Արիստակէս Աստիվերացւոյ ժամանակակից պատմագրութենէն՝ եւ ոչ Ուսահայեցւոյն Մատթէոսի՝ Վարդանու՝ եւ այլոց պատմագրութեանց մէջէն պարզապէս չեմք կարող ստոյգ տեղեկութիւն քաղել թէ վերոյիշեալ Գեորգեւ Նշանը կամ Կէնաց Ժայռը ո՞ւր մնաց եւ Պետրոս Կաթողիկոսի սեփհականութիւնն էր թէ չէ՝ Սենեքերիմ արքայի Արծրունւոյ ի Սեբասիա՞ տարած սուրբ խաչն էր՝ — զոր քսանորին պատուիրանաց 1027 փրկչական թուականում՝ նորա (Սենեքերիմայ) որդիք՝ վերագարձուցին եւ զետեղեցին ի Վարազ՝ ինչպէս իւրեանց հանգուցեալ հօր մարմինը եւս ամփոփեցին ի նոյն վանս. — եւ եթէ այլ է ի Վարազ տարուածն եւ այլ է Պետրոս Կաթողիկոսի ունեցածն, ուրեմն վերջնոյնը ինչեղաւ կամ ո՞ւր մնաց:

Կոտայից գաւառում երբեմն՝ ինչպէս նաեւ ներկայ թուականէս մինչեւ մի քանի տասնեակ տարիներ առաջ՝ շէն եղած եւ այժմ շատերու նման բուոց բնակարան գարձած Զագափանոց կիսականգուն աւերակաց վերայ գտնուած (փրկչական 1325 եւ) Հայոց ԶԼԻ թուականը կրող մի արձանագրութեան մէջ թէպէտ նոյն վանուց անունը որոշակի չէ յիշուած, սակայն յատուկ անուն չունենալով թէ չէ՝ Զագաւանի մօտ գտնուելոյն համար արդեօք՝ Զագաւանք յիշուելը կը գտնեմք պատմութեանց մէջ՝ (1441 թ.) Հայոց Հայրապետութեան վերջին անգամ այսր ի Ս. Էջմիածին փոխադրուելոյն եւ նոր Կաթողիկոսի (Կիրակոս Վիրապեցւոյն)

ընտրութեան առթիւ հաւաքուած ժողովականաց մէջ Սարգիս Վարդապետ Զաֆալանից եղած եւ գրուած լինելով, սակայն նկատելով որ՝ նոյն աւերակ վանուց մէջ երկու տաճար կայ՝ մինը մեծ եւ միւսը փոքրիկ իբր մատուռ՝ ինչպէս որ ակնհասեա եղած եմ, մեծը՝ բոլորակաբար գանուած շինուածոց եւ մեծ պարսպին մնացորդներովը գրեթէ հիմքերէն տեղ տեղ քիչ բարձր գիրքերովը կտեսնուին, իսկ միւս մատուանմանը՝ որ մեծէն 8—9 քայլէն աւելի բացակայ կը գտնուի եւ կիսակործան, եւ յիշատակարանները սորա վերայ են, որոցմէ երկուքը թուական ունին, — մինը վերեւ յիշածս է, եւ երկրորդը՝ ՌՄԷ (այս ինքն իբր 1758) թուականում արձանագրուած է, յորում թէ Զաֆալանս անունը եւ թէ Գեորգիէլ սորէ նշան յիշուած են: Գիտելի՞ք՝ երրորդ կարեւոր արձանագրութիւն եւս կայ՝ որոյ թուականը եղծուած է, յորում Գրիգոր Կաթողիկոս ամենայն Հայոց Վարդապետօք եւ Նպիտակոսօք զԶագ (աւանը) ընծայ Գետադարձ Ս. Նշանին շնորհելը կարձանագրէ, եւ եթէ այս յիշատակեալ Գրիգոր Կաթողիկոսը ի կենդանութեան վերոյիշեալ Կիրակոսին յաջորդողը եւ Մակեդոնի Զաֆալանիէն է՝ որ 1443 թուականում Հայրապետութեան գահը բարձրացաւ, ուրեմն երկու կարեւոր թուականաց մէջ թեթեւ տարբերութիւն գտնուելոյն համար գուցէ ներելի լինի կարծելը, զի թէեւ երկու անունը եւս անխորտիր տրուած է յիշեալ վանուց, բայց աւելի սովորական կերպով՝ Զաֆալանս կոչուած է եւ առանձին գտնուած փոք-

րիկ տաճարը Ս. Նշանի անուամբ շինուած է՝ ուստի կկոչուի եւ նա է բուն Գետադարձ Ս. Նշան եկեղեցին. բայց թէ ո՞րն է հին կամ կանխաւ շինուած է, մեծ տաճարը թէ փոքրը, ստոյգը ասելը դժուար է: Ասոնցմէ այսքանը հետազօտելով պէտք է եզրակացնել, թէ ինչո՞ւ համար Գետադարձ Ս. Նշան անունը եւս կրկին յիշեալ Զագալանքը կամ փոքրիկ եկեղեցին:

Անշուշտ Պետրոս Գետադարձ Կաթողիկոսի ունեցած Գետադարձ Նշանը կամ Գեորգիէլ կենաց փայտը կամ նորա մի մասը աստ երբեմն պահուած պիտի լինի:

Ուրեմն Սերաստիոյ Ս. Նշան վանքում գտնուածը ի՞նչ էր:

Եթէ յիշեալ Գեորգիէլ կենաց փայտը Կաթողիկոսարանի սեփահանութիւնն էր, ուրեմն Պետրոս Կաթողիկոսի առ Աստուած փոխուելէն զինի՞ պէտք էր որ վերագարձնէին յԱնի, եւ ընդհանապէս ի՞նչպէս կարելի է մեկնել՝ որ ուղղակի Զագ աւանը կամ Զագալանքը բերուած լինի եւ նորա համար եւ անուամբ փոքր եկեղեցին հաստատուած:

Թէ այսպէս եւ թէ այնպէս՝ աւելի հաւանականագոյնն է կարծելը զի գուցէ մի նշանաւոր անձն յիշեալ Գեորգիէլ կենաց փայտէն մի մասն ի պարգեւի մասին ընդունած՝ եւ Զագալանուց ընծայած լինի, կամ թէ նորա համար Զագալանքը հիմնուած լինի, ուստի երբեմն թէ յիշեալ վանքում եւ թէ Սերաստիոյ Ս. Նշան վանքում Գեորգիէլ կենաց

Քայրը՝ երկու կամ աւելի բաժին եղած լինելով՝ գտնուած լինի:

Գուցէ ապագայում աւելի որոշ եւ ընդարձակագոյն տեղեկութիւն գըտնուի կամ ստուգապատոււմ հին ձեռագիրներու յիշատակարաններէն եւ կամ պատմութեանց հատուածներէն կարեւոր միանգամայն մանրամասն ճիշտ տեղեկութիւնքը քաղել հնարաւոր լինի, զոր նաեւ Սեբաստիայում քննելը եւ իմանալը հեշտ է՝ եթէ հին եկեղեցւոյ՝ կամ որ նոյն է՝ Ս. Նշան վանուց շինութեան պատմութիւնը կամ արձանաքարը կայ եւ ըստ բաւականին պատմութիւնը կպարունակէ:

Արգ յիշեալ Գեառաբէլ Սուրբ Նշանի պատմութեան վերաբերեալ մի կարեւոր մաս համարելով՝ ի ստորեւ արժան կը համարիմք մի ձեռագիր նամակէ քաղուած հետագայ պարբերութիւնքը հաղորդել ի տեղեկութիւն բանասիրաց միանգամայն համայն մերազանց յորում նաեւ պէտք է աւելի դիտել եւ եզրակացնել՝ որ Ս. Նշան վանուց եկեղեցւոյ խորանին կամ սեղանոյն կամարին մէջ խնամքով զգուշութեամբ դետեղուած եւ պահուած մի խաչը եւ ի նմին ամփոփուած մասունքը՝ աննշան բան չէին կարող լինել, մանաւանդ նկատելով զինոյն Ս. Նշանի նշանաւոր՝ երբեմն բազում միաբաններով ճոխ՝ եւ բաւական հին վանքում թաղուած է Պետրոս Գեառաբարձ Հայրապետը, հետեւաբար եթէ նորին սեփհականութիւնն էր կամ թէ նորա ունեցած Կենաց իայտի մասը եւս Սենեքերիմ ար-

քայ Սրժբուհուոյ ի Վարագ վերադարձունել տուածէն *) ուրիշ էր, անշնչա յիշեալ վանքում կմնար, զոր հետոհետէ յաջորդող խառնաշփոթ ժամանակներում՝ մանաւանդ նախանձորք Յունացմէ շրջապատուած լինելով՝ եկեղեցւոյ հիմանց մէջ ամփոփելէն ուրիշ ապահով տեղ ու միջոց գտնել չէր կարելի յափշտակիչներէն ազատ պահելոյ համար, գուցէ եւ յատուկ նոյն Ս. Նշանի անուամբ յիշեալ եկեղեցին կառուցած լինին եւ վանքը համանունաբար վերակոչած. ուստի 1815 թուակախում՝ երբ Սեբաստիոյ Ս. Նշան վանուց եկեղեցին ի հիմանց նորոգ շինել ուղելով կքանդէին՝ անակնկալ կերպով կը գտնուի եւ կյայտնուի յիշեալ Ս. Նշանը, որոյ համար այսր ի Ս. Էջմիածին լուր հանելով՝ միաբան եղբայրներէն ոմանք՝ եւ յականէ յանուանէ յիշելով՝ երբեմն Վանու Մայրագոյն Նուիրակ եղող Կարնեցի Մինաս Վարդապետն (եւ Եպիսկոպոս) մանրամասն տեղեկութիւն խնդրած են, եւ ի 4 ն Ղոկտեմբերի 1816 ամի Սեբաստիայէն Գալուստ Վարդապետ (որ եւ Եպիսկոպոս) մի նամակում նորագիւտ Սուրբ Նշանի համար եւս գրած է՝ Մինաս Վարդապետին **) , յորմէ կարեւոր մա-

(*) Եթէ միեւնոյնը եւս լինէր, կհպանիմ կործնել որ դարձեալ աստի մի բանի մասը կորնի է աննաւս լինի:

(**) Նամակի վերնագիրը միայն Մինաս վարդապետի անուամբ է, իսկ հասցէին բոլր կցուած էր եւ կամ առ շիրաճի (հնմանաստուչ) Գակիէլ վարդապետ: — Նամակադիր Գալուստը Արեղայ ձեռագրած է, իսկ կնրոյ մէջ վարդապետ փորագրուած է:

սը քաղած եմք եւ մեր, որ արդարեւ թէ ուշադրութեան արժանի է՝ եւ թէ պատմութեան համար միկարեւոր հատուած է:

Վ. Ե. Մ.

Ահաւասիկ յիշատակեալ քաղուածք:

« Եւս դարձեալ խնդիր էիր՝ վասն նորագիւտ կենաց փայտին՝ թէ արդեօք՝ զո՞րպիսի գտաք, եւ զո՞րպիսի ինչ մասնէ: Թէպէտ երկար է սքանչելագիւտ պատմութիւնն, բայց այժմ՝ համառօտ գրեցից. զի հերոս կամեցաք զայն Սուրբ Նշանի յիշեցեալ եկեղեցին, (որ վասն յոյժ հնաշէն գոլայն՝ թէ տաճարի առատադն եւ թէ որմունքն, խախտեալ եւ բեկբեկեալ էին,) քակել եւ նորոգ սրբատաշ քարամբք ընդարձակ շինել: Եւ ի շարձութոյն Երեւման սրբոյ Խաչին, մինչ մշակքն քակէին զքարինսն եւ զաղիւսն եւ քակելով հասեալ էին՝ մինչեւ ցկամար սեղանոյն, եւ յանկարծ ի հարկանել զփայտատն՝ ի մէջ կրամած քարանցն՝ ի յաջակողմն կամարին, անդ գտեալ էին պատուհան մի՝ ընդգրկեալ ի միջի կրամած քարանց եւ աղիւսոցն, կղմնգրով գոգեալ եւ ամփոփեալ. եւ ի միջի նոյն պատուհանին՝ երեւեցաւ թղաջափ մի բոլորաշէն արծաթեայ սկուտղ մի՝ եւ նշմար ոսկեթել ծածկոցի միոյ ի վերայ տարածեալ, բայց յոյժ փոտեալ եւ ի փոշի փոխարկեալ. վասն որոյ եւ ի յերեւիլն՝ հոտ անմահութեան բուրեցաւ. եւ անդէն ահիւ եւ զողութեամբ մերձեցեալ անարժանիս համբուրիւ բարձի ի պա-

տուհանէն, եւ տարաք ի սուրբ յեկեղեցին՝ տեսանել թէ զինչ իցէ. եւ երկիրեղիւ մեծաւ բայցաք զբերանն արծաթեայ սկուտղի, եւ տեսաք դարձեալ հնացեալ ոսկեթել ծածկոցիւ ծածկեցեալ թանձր եւ ստուար խաչ մի արծաթեայ ձուլածոյ, գոլով եւ ի վերայ նորին եգեալ սրբոց ոսկերք, բայց անյայտ ի մէնջ՝ թէ որո՞ց սրբոցն իցէր, եւ կամ յօղուածոյ սր տեղեացն, եւ առ յայսքան տեսութիւնս ոչ հանգեան սիրաքն մեր, մինչեւ ցերկուս ժամս տարակուսի լեալ խորհէաք ճրմլեալ որտիւ, արդեօք՝ զինչ ինչ մեծագոյն մասն լեալ իցէ ի ծոցոյ նոյնոյ մեծի խաչին. եւ մինչ երկուացեալ շրջալրեալ որոնէաք զողութեամբ մեծաւ, թերեւս գտցուք զտեղի ինչ բանալ եւ զայն խաչն, եւ Աստուծով գտաք զտեղին բացման եւ փակման. բացաք ուրախութեամբ եւ զայն, եւ տեսաք ի միջի նոյնոյ խաչին յար եւ նման ըստ պահարանի նոյն խաչին, դարձեալ մատնաչափ մի խաչ ի միջի յիշեցեալ արծաթեայ խաչին, բայց այն ոչ արծաթեայ այլ՝ ձուլեալ յստակ եւ պատուական յոսկոյ սրբոյ. եւ առ եգերք շրջապատ ոսկեայ խաչին մարգարտօք հիւսեալ, եւ դարձեալ խաչ ի միջի խաչի տեսանելով՝ ոչ բնաւ ժողեալ հանդարտէին սիրաքն մեր, եւ նմա ձեռնամուկս լինիլ եւ բանալ ի յահէն երբէք ոչ իշխեաք, վասն որոյ եւ յայնմ աւուր ի բաց կացաք. եւ քարոզ կարգալով բոլոր միաբանութեամբ սնտեցաք յազօթս՝ եւ ի գիշերային հսկմունս, որ նոյն առաւօտն էր տն երեւման սրբոյ Խաչի

կիրակէին, թերեւս ի Հոգւոյն սրբոյ
 գորութենէ, եւ շնորհիւ սրբոյ Խաչին,
 ազգուութիւն լիցի ումեք ի մարդկանէ,
 զինչ մասն լինիլ ի խաչին. եւ յաւար-
 տիլն երրորդում ժամու սրբոյ պատա-
 րագին, քննեալ հարցաք յամենեցունց
 որ յոչ ումեք չէր ինչ յայտնեցեալ:
 Սահայն Աւետիս Վարդապետն մեր՝
 համարձակեալ եւ յուսապնտեալ ի ջը-
 նորհս սրբոյ Խաչին, առեալ զսուր մի՝
 սկաւ աղօթելով եւ արտասուօք՝ բռ-
 նութեամբ բանալ զխաչի վերին երեսի
 սկեղէն տախտակն, եւ մեր գողու-
 թեամբ հարեալ, միաբանութեամբ ըզ-
 Տէր ողորմեայս ասելով եւ զխուճկս
 անոյշս մատուցանելով՝ աղաչեցաք զԱս-
 տուածընկալ սուրբ Նշանն, առ ի չը-
 պատժել զանարժան ժպրհութիւնս
 մեր: Իսկ նա սարսափմամբ մեծաւ կա-
 րեմ՝ ասել հրաշիւք՝ քան թէ հնարիւք,
 եբաց եւ եգիտ զսարսափելին հրեշտա-
 կաց եւ մարդկան, այս ինքն՝ փոքր բակ-
 լայի միոյ չափ՝ կարմրագունեղ՝ եւ մազ
 մազ խայտանիչ՝ սուրբ մասն ինչ ի Կե-
 նաց փայտէ, ի բուրմանէ անոյշ եւ
 յանմահական հոտոյն՝ եւ ի տեղարա-
 նէն ստուգեալ. բայց զճշմարիտն ասեմ՝
 ո՞վ խաչաբարձ հոգիազարդ փափագող՝
 նորագիւտ գանձին անգնոյ՝ հոգեսէր
 տէր վարդապետ, զի ո՞չ թուղթ՝ եւ ո՞չ
 գիր գտաք ի վերայ. այլ նկատելով
 զպատմութիւնս գրոց. . . . որ ի փոք-
 րիկ նախկին բառարանի գրքոջն գրե-
 ցեալ կայ՝ որ որդիքն Սենեքարիմայ ար-
 քային, ընդ Պետրոս Գետագարձ Հայ-
 բապետին՝ բերեալ են այսր զԳետար-
 գել սուրբ Նշանն եւ ի սոյն սուրբ Նը-

շանի գեկեղեցին շինեալ, եւ աստ ամ-
 փոփեալ, անտես անլուր եւ անգիւտ ի
 մարդկանէ, թագուցեալ աստ ի յեր-
 կիւղէ գոյոց, միայն ի նախնեաց սուրբ
 եկեղեցւոյս անունն՝ սուրբ Նշանի եկե-
 ղեցի, վերակոչեցեալ. որ եւ գու ինքնինդ
 իսկ տեսեալ ես աչօք զգերեզմանն Գե-
 տարգել սուրբ Հայրապետին Պետրոսի
 աստ՝ ի դարպասի առաջի դրան եկե-
 ղեցւոյս՝ յաջմէ կողմանէ ամփոփեալ
 կայ Սրգ համառօտիւ զայսքանս՝ խա-
 չասէր խաչակրօնիդ՝ նշմարեալ ցու-
 ցաք. յորմէ եւ հայցեմք ձեզ եւ մեզ՝
 եւ ամենից հաւատացելոց, լիցի օգնա-
 կան եւ պահապան. ամէն:

« Ի հերուէ սկսեալ եմք դնոյն սուրբ
 Նշանի եկեղեցին՝ սրբատաշ քարամբք
 եւ մեծալայելուչ շինել, եւ մինչեւ ցկա-
 մարն հասուցեալ, ցուրան վերաժա-
 մանեաց մնաց կիսակատար. եւ աղօ-
 թիւք սրբազան հօրս՝ եւ ձեր, յուսամ՝
 յայսմ ամի Աստուծով զնաւակատիւն
 սրբոյ տաճարիս տեսանել, եւ մեռանիլ:»

Ողջ լիւր ի սէր Տեառն եւ

ԳԱԼՈՒՍ ԱՐԵՂԱՅԻՍ

